

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-3**

ք. Երևան

«29» 10 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինկենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Կ. Արզումանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինայանի անվան, գ. Վաղատինի և գ. Դարբասի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Պատվիրատու

1

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 6 հավելվածով կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չա փով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **64 000 000 (վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 7 539 200 (յոթ միլիոն հինգ հարյուր երեսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝**

- **ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 21 000 000 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ, որից 2020թ. համար՝ 2 473 800 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,**

- **ՀՀ Սյունիքի մարզի գ. Վաղատինի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 21 000 000 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ, որից 2020թ. համար՝ 2 473 800 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,**

- **ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 22 000 000 (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ, որից 2020թ. համար՝ 2 591 600 (երկու միլիոն հինգ հարյուր ինսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25 %-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի լսխտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնությամբ: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնությամբ:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ), բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4, N 5 և N 6 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության իրապարակ
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնակյալ վարչություն
Հ/Հ 900011023661, 900011023639

900011023695

Հ/Հ 02563827

Գլխավոր քարտուղար

Ed. Ghazaryan
(ստորագրություն)



ՎԱՏԱՐՈՂ՝


«Շինկենտրոն» ՓԲԸ

ք. Երևան-88, Աշտարակի խճուղի, 45
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյանի մ/6

Հ/Հ 163028151468

Հ/Հ 03300044

Տնօրեն:



Արզումանյան

Կ.Տ.

Handwritten signatures at the bottom of the page.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան, գ. Վաղատինի և գ. Դարբասի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մաս ուցման	
					հասցեն	Ժամկետը*
3	71351540/520	դրամ	64 000 000	1	ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիս, գ. Վաղատին և գ. Դարբաս	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ
Տեխնիկական բնութագիրը						
1	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը					
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն					
2	Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը					
	Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ					
3	Տեխնիկական առաջադրանք					
	Տեխնիկական հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն, Հավելված N 4, Հավելված N 5					
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդրված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուր իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում					
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում					

	<p>Հսկողական չափազրույթությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամյա հաշվետվությունների ներկայացում: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:</p>
	<ol style="list-style-type: none"> 1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ: 2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում: 3. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատու- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում՝ սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները՝ համաձայն կից ներկայացված Հավելված 5-ի և դրանով սահմանված ստուգումների պլանի, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով: 4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
	<p>Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում</p>

*** Ծառայության ժամկետը հաշվարկվում է ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող պայմանագրին (համաձայնագրին) ուժի մեջ մտնելու օրվանից՝ շինարարական աշխատանքների կատարման և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերի (համաձայնագրերի) առկայության դեպքում:**

Ցուրաքանչյուր օբյեկտի համար, շինմոնտաժային աշխատանքների ամբողջական ծավալի կատարման ժամկետը՝ 420 օրացուցային օր է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե»
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Կ 900011023661, 900011035830,




Գլխավոր քարտուղար
 (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինկենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան-88, Աշտարակի խճուղի, 45
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյանի մ/6
 Հ/Կ 163028151468
 ՀՎՀՀ 03300044

Տնօրեն՝



3	71351540/520	900011023695	<p>ՀՀ Սյունիքի մարզի գ. Դալարասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն</p>	2 591 600	2 591 600	7 539 200	7 539 200
ԸՆԴԱՄԵՆԸ					2 591 600	7 539 200	7 539 200

* Վճարման եղանակ գումարները ներկայացվում են անողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
ազնադրության գործառնական վարչություն
ՀՀ 900011023661, 900011035830,


ՀՎՀՀ 02565827



Ա. Սկուրյան
ԿՏ

ԿԱՏԱՐՈՂ՝

ՀՀ Շինկենտրոն» ՓԲԸ
ք. Երևան-88, Աշտարակի խճուղի, 45
ՀՀ «Այլեկոնմբանկ» ԲԲԸ, Շահումյանի մ/ճ
ՀՎՀՀ 163028157468
ՀՎՀՀ 03300044



Տնօրեն՝

[Handwritten signature]

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
 » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
 հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական ընդհանուր չարտերանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի հս մարդ
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ծառայության մատուցման մեթոդաբանություն

ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան, գ. Վաղատինի և գ. Դարբասի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ

	Աշխատանքի անվանումը	Ծառայության մատուցման նկարագիրը
1	Հողային աշխատանքներ	Իրականացնել և կազմել շենքերի գեոդեզիական նշահարման ակտը, գրունտների և հիմքերի նիշերի երկրաբանական եզրակացությունը
2	Բետոնային աշխատանքներ	Իրականացնել և կազմել կոնստրուկցիաների կաղապարների և ամրանավորման տեղադրման ծածկված աշխատանքների ակտերը: Բետոնային աշխ-րը իրականացնել վիրացիայով: Բետոնացման ընթացքում լաբորատոր փորձարկումների համար վերցնել բետոնե խորանարդիքներ: Կաղապարների ապամոնտաժումից հետո սահմանված կարգով իրականացնել բետոնե խնամք:
3	Ամրանային աշխատանքներ	Շին.հրապարակ մուտք գործած յուրաքանչյուր ամրանների խմբաքանակից վերձնել ամրանների նմուշներ լաբորատոր փորձարկումների համար, ստուգել ամրանների սերտիֆիկատների առկայությունը և նրանց տրամագծերը:
4	Մետաղական կոնստրուկցիաներ	Ստուգել շին. հրապարակ մուտք գործած մետաղական կոնստրուկցիաների և էլեմենտների սերտիֆիկատների առկայությունը և նրանց չափսերը և սորտամենտները: Սահմանված կարգով ստուգել զոդման աշխատանքների որակը
5	Քարի շարվածք	Ստուգել քարի(րների) չափսերը, շարվածքի մեջ տեղադրվող ամրանային ձողերը, ցանցերը և այլ կոնստրուկտիվ էլեմենտների հետ միացման հագույցները
6	Ներքին հարդարման աշխատանքներ	Ստուգել հարդարման աշխ-րի համար նաժատեսված նյութերի սերտիֆիկատների առկայությունը, որակը և հարդարման աշխատանքների որակը
7	Ինժեներական ցանցեր	Ստուգել բոլոր ինժեներական ցանցերի՝ ջուր, կոյուղի, օդափոխություն, ջեռուցում, էլեկտրականություն, կապի և անվտանգության համակարգերի շին.հրապարակ մուտք գործած նյութերի և ապրանքների որակը և սերտիֆիկատների առկայությունը:
8	Էներգախնայողության միջոցառումներ	Նպաստել, որ Կապալառուն լուսավորության համար օգտագործի LED տիպի լուսատուներ և ոչ հոսանքատար փոքր մեխանիզացիա, զոդման և այլ սարքավորումներ:
9	Ասֆալտաբետոն	Համապատասխան գործիքներով ստուգել հողային աշխատանքների և պաստարի նիշերը, կազմելով երկայնական և լայնական պրոֆիլներ: Յուրաքանչյուր (ըստ հաջորդականության) կատարվող աշխատանքների համար կազմել ծածկված աշխատանքների ակտեր: Ասֆալտաբետոնե ծածկույթի կառուցումից հետո վերցնել կեններ լաբորատոր փորձարկումների համար:

10	Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ	Փորձարկումների են ենթակա շին. հրապարակ մուտք գործած բոլոր նյութերը, այդ թվում բետոն, ամրան և այլն; բոլոր ինժեներական ցանցերը (ջուր, կոյուղի, ջեռուցում, օդափոխություն, հակահրդեհային և պահպանման սարքերը):
11	Աշխատանքների ընդունում	Աշխատանքները ընդունվում են համաձայն ներկայացված երկրաբանական, գեոդեզիական, ծածկված, փորձարկման, ակտերի և սերու իֆիկատների առկայության դեպքում, միաժամանակ կատարված աշխատանքների որքևի համապատասխանությանը շին.նորմերին և նախագծին

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝



«Քաղաքաշինության կոմիտե»
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 «Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն»
 Հ/Հ 900011023661, 900011035830,
 900011023695

Հ/Հ 02565827
 Գլխավոր քարտուղար
 (ստորագրություն)


ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինկենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան-88, Աշտարակի խճուղի, 45
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյանի մ/6
 Հ/Հ 163028151468
 ՀՎՀՀ 03300044

Տնօրեն՝


 (ստորագրություն) Կ Արզումանյան
 Կ.Տ.




Լաբորատոր փորձարկումների պլան

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Փորձերի քանակ
Գրունտների խտացման և այլ փորձարկում	ըստ շերտի	-	22
ԵՐԿԱԹՔԵՏՈՆԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
Երկաթբետոնե կոնստրուկցիաներ 0+00 նիշից ցածր			
Քնտիլային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 50 մ ³ բետոնի ծավալից 10x10x10 կաղապարներ (պարտիաների քանակ)
Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	մ ³		1
Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		6
Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	մ ³		3
Ամրակային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20 տ խմբաքանակից ըստ տրամագծի
Ամրան Ø 6 մմ A 240 C	տ		1
Ամրան Ø 8 մմ A 240 C	տ		1
Ամրան Ø 10 մմ A500C	տ		1
Ամրան Ø 12 մմ A500C	տ		1
Ամրան Ø 16 մմ A500C	տ		1
Ամրան Ø 18 մմ A500C	տ		1
Ամրան Ø 22 մմ A500C	տ		1
Երկաթբետոնե կոնստրուկցիաներ 0+00 նիշից բարձր			
Քնտիլային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20 մ ³ բետոնի ծավալից 10x10x10 կաղապարներ (պարտիաների քանակ)
Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		3
Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		7
Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		1
Դիաֆրագմաների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		5
Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		10
Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	մ ³		1
Բետոնե աստիճանների պատրաստում	մ ³		1

11-1 19/01/2020 թ. հունվարի 1 2011

Ամրանային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20 տ խմբաքանակից ըստ տրամագծի
Ամրան Ø 6 մմ A 240 C	տ		1
Ամրան Ø 8 մմ A 240 C	տ		1
Ամրան Ø 10 մմ A500C	տ		1
Ամրան Ø 12 մմ A500C	տ		1
Ամրան Ø 14 մմ A500C	տ		1
Ամրան Ø 16 մմ A500C	տ		1
Ամրան Ø 18 մմ A500C	տ		1
Ամրան Ø 22 մմ A500C	տ		1
Ամրան Ø 25 մմ A500C	տ		1
Ամրան Ø 28 մմ A500C	տ		1
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	
Քետոնի ամրության որոշում չքայքայող առաձգական հետադարձի մեթոդով Schmidt Hammer սկլեոմետրի միջոցով	հատ		20
Եռակցման կարանների տեսողական զննում	գ.մ		200
Եռակցման էլեկտրոդների փորձարկումներ	հատ		5
Քետոնի ամրության որոշում ե/ք կոնստրուկցիայից հորատած նմուշ զլանի միջոցով	հատ		9
Տանիքի մետաղական կոնստրուկցիաների եռակցման կարանների զննում սարքավորումների միջոցով	գ.մ		50
ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Փորձերի քանակ
Անֆալտաբետոնի խառնուրդի նմուշների փորձարկում	մ ²		4
Անֆալտաբետոնի կեղևների փորձարկում	մ ²		4
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԿԱՐՈՒՄ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Փորձերի քանակ
Նյութի ջերմահաղորդականության գործակցի չափում	ըստ շերտի		1
Ջերմամեկուսիչ նյութերում օրգանական նյութի պարունակության որոշում	ըստ շերտի		1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե»
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 «Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն»
 Հ/Կ 90001023661, 90001033830,
 0001048893,
 02565827

Գլխավոր քարտուղար
 (ստորագրություն) Սևուհյան
 Կ.Տ.
 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինկենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան-88, Աշտարակի խճուղի, 45
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյանի մ/ճ
 Հ/Կ 16302815468
 ՀՎՀՀ 03300044

Տնօրեն՝

(ստորագրություն) Մանուկյան
 Կ.Տ.

Handwritten signature

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ*

ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների համար

Աղյուսակ N1

Ը/Ը	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
1	Շենքի կողող կոնստրուկցիաների շահագործման հաշվարկային ժամկետ	50
	Հարդարման աշխատանքներ	
2	Բազալտե հանքաքարակից ջերմամեկուսիչ նյութեր	50
	Տանիք	
3	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ)	40
	1.6 Սառը ջրի մատակարարման ներքին ցանց	
4	Ցնցուղի ծորակ-խառնիչ	1
5	Լվացարանի ծորակ-խառնիչ	1
6	Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչ	1
7	Ջրառման ծորակ Փ15մմ	1
	1.9 Էլեկտրալուսավորում	
8	Առաստաղի LED լուսատու 35վտ, 3350Lm, IP40, 4000K	1
9	Առաստաղի LED լուսատու 35վտ, 3350Lm, IP40, 4000K, վթարային, ներսարքված մարտկոցով	1
10	Առաստաղի LED լուսատու 33վտ, 2800Lm, IP20, 4000K դասասենյակների համար	1
11	Առաստաղի LED լուսատու 28վտ, 3100Lm, IP20, 4000K գրատախակը լուսավորելու համար	1
12	Առաստաղին ամրացվող LED լուսատու 27վտ, 2250Lm, IP20,4000K	1
13	Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 27վտ, 2250Lm, IP20, 4000K	1
14	Առաստաղի LED լուսատու, պաշտպանված մետաղական ցանցով 34վտ, 3700Lm, IP20, 4000K	1
15	Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 34վտ, 3700Lm, IP20, 4000K	1
16	Լուսատու հերմետիկ LED 31վտ, 3500Lm, IP65, 5000K	1
17	Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 31վտ, 3500Lm, IP65, 5000K	1
18	Լուսատու դահիճի համար LED 33վտ, 3600Lm, IP40, 4000K	1
19	Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 33վտ, 3600Lm, IP40, 4000K	1
20	Պատի LED լուսատու 18վտ, 1310Lm, IP65, 4000K	1

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
21	Լուսատու LED, ներսարքվող կախովի առաստաղի մեջ 15վտ, 650Lm, IP65, 4000K	1
22	Լուսատու ազդանանշանային, վթարային 4վտ IP40 ԵԼՔ	1
9.Քարեկարգման աշխատանքներ		
23	Ասֆալտրետոնե ծածկույթի շահագործման երաշխիքային ժամկետ	5

ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ յարոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների համար

Աղյուսակ N2

Հ/Հ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր/	Չափման միավոր	Քանակ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ՝ տրված արտադրողի կամ մատակարար-ներկայացուցչի կողմից /տարի/
1	2	3	4	5
Ամբարձիչ				
1	TELI ELEVATOR TELI 320 Պտուտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ h=1.2 920-1370	հատ	1	1
1.3 Օդափոխություն				
2	VKT 3600/3200 Ներածման-արտածման սարք, Լն=3600խմ/ժամ, Լա=3200խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ Օտ=27,6կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=3600մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=3200մ3/ժամ, 6) աղմկախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2
3	VKT 2400/2400 Ներածման-արտածման սարք, Լն=2400խմ/ժամ, Լա=2400խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ Օտ=17,4կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=2400մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=2400մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2

ՎԼ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր/	Չափման միավոր	Քանակ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ՝ տրված արտադրողի կամ մատակարար-ներկայացուցչի կողմից /տարի/
1	2	3	4	5
	Ամրադձիչ			
4	VKT 7165/6140 Ներածման-արտածման սարք, Lն=7165խմ/ժամ, Lա=6140խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=52կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Lն=5885մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Lա=4860մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2
5	VKT 1820 Ներածման սարք, Lն=1820խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=13կՎտ 3) օդամղիչ ներածման Lն=1820մ3/ժամ 4) ձայնախլացուցիչ 5) օդի կարգավորիչ փական մուտքի վրա 6) ճկուն ներդիրներ 7) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2
6	Air one L=540 խմ/ժամ Օդափոխիչ կանալային L=540խմ/ժամ P=200Պա N=0,8կՎտ	հատ	1	6 ամիս
7	Air one L=275 խմ/ժամ Օդափոխիչ կանալային L=275խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	6 ամիս
8	Air one L=100 խմ/ժամ Օդափոխիչ կանալային L=100խմ/ժամ P=100Պա N=0,5կՎտ	հատ	2	6 ամիս
9	Air one L=325 խմ/ժամ Օդափոխիչ կանալային L=325խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	6 ամիս
10	Air one L=800 խմ/ժամ Օդափոխիչ կանալային L=800խմ/ժամ P=220Պա N=0,8կՎտ	հատ	1	6 ամիս
	1.5 Կաթսայատան սարքավորումներ			
11	Gassero Q=120 կվտ Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա "Северянин" Q=120կվտ հզորությամբ	կ-տ	1	1
12	Gassero Q=90 կվտ Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա "Северянин" Q=90կվտ հզորությամբ	կ-տ	1	1
13	DAB 120/250-40T Ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 120/250-40T մակնիշի (сдвоенный) G=3,57խմ/ժ, H=11,2մ, N=536–339վտ, n=2780—2080պտ/րոպ	կ-տ	1	1

Հ/Հ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր/	Չափման միավոր	Քանակ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ՝ տրված արտադրողի կամ մատակարար ներկայացուցչի կողմից /տարի/
1	2	3	4	5
	Ամբարձիչ			
14	DAB 60/250-40T Օդափոխության համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 60/250-40T մակնիշի (сдвоенный) G=4,96խմ/ժ, H=7մ, N=348—232վտ, n=2650—1520պտ/րոպ	կ-տ	1	1
15	DAB 30/250-40T (+3,3 նիշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,324խմ/ժ, H=2,9մ, N=192—8,8վտ, n=1440—1260պտ/րոպ	կ-տ	1	1
16	DAB 60/280-50T Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=9,05խմ/ժ, H=7,5մ, N=410—235վտ, n=1400—1130պտ/րոպ	կ-տ	1	1
17	DAB 60/280-50T Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=7,6խմ/ժ, H=7.6մ, N=410—235վտ, n=1400—1130պտ/րոպ	կ-տ	1	1
	1.7 Տաք ջրի մատակարարման ներքին ցանց			
18	Jiaxing JNG-30 Արևային ջրատաքացուցիչ JNG-30, V=300լ, կոլեկտորի տիպը վակուումային, չափերը 2343x1560x1710մմ	կոմպլեկտ	1	5
	1.12 Զրահեռացման համակարգի հակասառնեցման կարելային ցանց			
19	DEVI Devireg 330 Կարգավորիչ Devireg 330	հատ	1	5
20	DEVI CTX-40 Մոդուլային կոնտակտոր CTX-40, 40A	հատ	1	5
21	DEVI DTCE-30 Մալուխ ցեռուցվող DTCE-30 L=5մ, 137վտ	հատ	4	5
22	DEVI DTCE-30 Մալուխ ցեռուցվող DTCE-30 L=10մ, 274վտ	հատ	24	5
23	DEVI DTCE-30 Մալուխ ցեռուցվող DTCE-30 L=14մ, 366վտ	հատ	6	5
24	DEVI DTCE-30 Մալուխ ցեռուցվող DTCE-30 L=20մ, 576վտ	հատ	4	5
25	DEVI DTCE-30 Մալուխ ցեռուցվող DTCE-30 L=34մ, 933վտ	հատ	2	5
	1.13 Հրդեհի ահազանգման համակարգ			
26	БОЛИД С2000-М Կենտրոնական վահանակ Рубеж -20П	հատ	1	1
27	БОЛИД С2000-БИ SMD Ինդիկացիայի բլոկ Рубеж -БИ	հատ	1	1
28	БОЛИД YO-4C-02 911 միանալու վահանակ Тандем-2М	հատ	1	1
29	БОЛИД РИП-12 Անխափան սնուցման սարք ИВЭПР 12v3a	հատ	2	6 ամիս
30	БОЛИД ДИП-34А-03 Հասցեային ծխի ազդասարք ИП 212-64	հատ	44	1
31	БОЛИД ИПР 513-3АМ Հասցեային հրդեհի ձեռքի ազդարարիչ ИПР 513-11	հատ	8	1

Հ/Կ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր/	Չափման միավոր	Քանակ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ՝ տրված արտադրողի կամ մատակարար-ներկայացուցչի կողմից /տարի/
1	2	3	4	5
	Ամրադձիչ			
32	БОЛИД –Mayak 12 KP Շշակ	հատ	6	1
33	БОЛИД С2000-AP2 Մուտքային մոդուլ АМР-4 կամ համարժեք	հատ	1	1
34	БОЛИД ИПДЛ-Д-11/4P Հրդեհի գծային ծխի տվիչ	հատ	4	1
